

Գեղարքունիքի մարզպետ Ռաֆիկ Գրիգորյանի ուղերձը երեխաների պաշտպանության միջազգային օրվա կապակցությամբ

Յուրաքանչյուր երեխայի մեջ ենք մենք փնտրում ոչ միայն կյանքի իմաստը, այլ վաղվա չափահաս մարդուն, ստեղծարար ոգով ապրող քաղաքացուն, մեր շարունակությունն ու ցանկալի ապագան կերտողներին: Համոզված եմ, որ մեր երեխաները մեզ արժանվույն կփոխհատուցեն տրված խնամքի, հոգատարության, դաստիարակության, նվիրումի ու սիրո դիմաց՝ արդարացնելով բոլորիս հույսերն ու ջանքերը:

Մեր երեխաներին մաղթում եմ խաղաղ երկինք, ընտանեկան ջերմություն, մշտաժպիտ օրեր ու տարիներ, լուսաշող ապագա:

Լավագույն ցանկություններով՝

Գեղարքունիքի մարզպետ Ռաֆիկ Գրիգորյան